Հավելված N 6
ՀՀ կառավարության 2023 թվականի
օգոստոսի 3-ի N 1332 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ

1. Լիազոր մարմինն օրենսգրքով սահմանված պահանջների համաձայն կայացնում է որոշում ջրօգտագործման թույլտվությունն ուժը կորցնելու մասին:

2. Լսված լինելու իրավունքն իրացնելու նպատակով լիազոր մարմինը գրավոր հրավիրում է ջրօգտագործողին՝ հիմքերը ներկայացնելու համար: Ջրօգտագործողի լսված լինելու իրավունքի իրացումն արձանագրվում է:

3. Ջրօգտագործման թույլտվությունն ուժը կորցրած է ճանաչվում լիազոր մարմնի ղեկավարի հրամանի հիման վրա, ինչի մեջ հստակ նշվում է ուժը կորցրած ճանաչելու մասին պատճառներն ու իրավական հիմքերը: Ջրօգտագործման թույլտվության ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը լիազոր մարմինը պատշաճ ծանուցում է ջրօգտագործողին ջրօգտագործման թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու մասին հրամանն ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Ջրօգտագործման թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու մասին հրամանը ընդունելուց հետո լիազոր մարմինը 5 աշխատանքային օրվա ընթացքում այն գրանցում է ջրային պետական կադաստրում և ուժը կորցրած ճանաչում գրանցված ջրօգտագործման թույլտվությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

04.08.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ